Հավելված
ՀՀ վարչապետի 2018 թ.
մայիսի 25-ի N 565 – Լ
որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏԵՐԻ ԿՈՂՄԻՑ
ՀԱՄԱԿԱՐԳՎՈՂ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՆԵՐԸ

1. Հայաստանի Հանրապետության առաջին փոխվարչապետ Արարատ Միրզոյանը համաձայնեցնում, ներդաշնակեցնում և համակարգում է Հայաստանի Հանրապետության կառավարության գործունեությունն իրեն վերապահված հետևյալ առանձին ոլորտներում՝

1) առողջապահություն.

2) արդարադատություն.

3) արտակարգ իրավիճակներ.

4) կրթություն և գիտություն.

5) մշակույթ.

6) սպորտ և երիտասարդություն.

7) սփյուռքի հետ կապեր.

8) տարածքային կառավարում և զարգացում, Հայաստանի Հանրապետության մարզ-պետների հետ աշխատանքներ.

9) կոռուպցիայի դեմ պայքար, կանխարգելում, վերահսկողություն և մոնիթորինգ.

10) տեսչական բարեփոխումներ և տեսչական գործունեության քաղաքականություն.

11) պետական կառավարման համակարգի բարեփոխումներ և արդյունավետության բարձրացում.

12) հանրային ծառայության քաղաքականության և պետական կառավարման համակարգի կադրերի պատրաստման և վերապատրաստման հարցեր.

13) մարդասիրական օգնության քաղաքականություն.

14) անշարժ գույքի կադաստրի ոլորտի քաղաքականություն.

15) Հայաստանի Հանրապետության կառավարության նիստերի, նախարարական կոմիտեների և դրանցում քննարկվող փաստաթղթերի նախապատրաստման աշխատանքներ.

16) օրենսդրության գնահատման և կարգավորման քաղաքականություն, Հայաստանի Հանրապետության ազգային ժողովի հետ աշխատանքներ:

2. Հայաստանի Հանրապետության փոխվարչապետ Տիգրան Ավինյանը համաձայնեցնում, ներդաշնակեցնում և համակարգում է Հայաստանի Հանրապետության կառավարության գործունեությունն իրեն վերապահված հետևյալ առանձին ոլորտներում՝

1) բնապահպանություն.

2) գյուղատնտեսություն.

3) էներգետիկ ենթակառուցվածքներ և բնական պաշարներ.

4) տնտեսական զարգացում և ներդրումներ.

5) տրանսպորտ, կապ և տեղեկատվական տեխնոլոգիաներ.

6) միջուկային անվտանգություն.

7) վիճակագրություն.

8) քաղաքաշինություն.

9) գործարար միջավայրի բարելավմանն ուղղված աշխատանքներ.

10) արտադրական ենթակառուցվածքների բնագավառի աշխատանքներ:

3. Հայաստանի Հանրապետության փոխվարչապետ Մհեր Գրիգորյանը համաձայնեցնում, ներդաշնակեցնում և համակարգում է Հայաստանի Հանրապետության կառավարության գործունեությունն իրեն վերապահված հետևյալ առանձին ոլորտներում՝

1) աշխատանք և սոցիալական քաղաքականություն.

2) ֆինանսական-հարկաբյուջետային քաղաքականության հարցեր.

3) արտաքին տնտեսական կապեր.

4) միջազգային առևտրի հարցեր.

5) միջազգային ֆինանսավարկային կառույցների և տարածաշրջանային կազմակերպությունների, այդ թվում՝ Եվրասիական տնտեսական միության, Անկախ պետությունների համագործակցության, Համաշխարհային բանկի, Արժույթի միջազգային հիմնադրամի, Միջազգային ֆինանսական կորպորացիայի, Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի, Ասիական զարգացման բանկի հետ աշխատանքներ.

6) Եվրոպական միության կողմից տրամադրվող աջակցության և Եվրոպական միության գործիքակազմի շրջանակներում իրականացվող ծրագրեր:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Է. ԱՂԱՋԱՆՅԱՆ